

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлист. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լուրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ ընտրողական սկզբունքը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գիծ մեր թատրոնի կեանքից. Հայոց թատրոն. Ռուսաց թատրոն. Նամակ Ատո-րականից. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԱՌԱՎԵՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՏՐՈՂԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Ամեն անգամ երբ տասն և չորս տար-վայ ընթացքում «Մշակը» այս կամ այն միտքն էր յայտնում մեր եկեղեցու մասին, ասում էր, օրինակ, թէ մեր եկեղեցին շեղ-վել է առաջին դարերի սկզբնական, մա-քուր Հայ-լուսաւորչական տաճարութիւննե-րի շատերից,—մեր ինտելիգենցիան անասե-լի արմուկներ էր գցում հաւատացնելով որ մենք քանդում ենք Հայոց եկեղեցին:

Երբ մենք քաջատրամ էինք Հայոց եկե-ղեցու հիմնական սկզբունքը, որ ընտրողա-կանութիւնն է, և որից մեր այժմեան հո-գեւորականութիւնը փոքր առ փոքր շեղվել է, երբ մենք ասում էինք թէ մենք, ժողո-վուրդը, և կ ե ղ ե յ ի ե ն ի կ ա ղ մ ու մ և ոչ թէ հոգեւորականների դասակարգը, թէ եկեղեցին մեզ հաւատարմ է և ոչ թէ հո-գեւորականների համար, որոնք միմիայն և-կեղեցու ս պ ա ս ա լ ո ռ ն ե ռ են,—մեզ պատասխանում էին որ մենք զիպչում ենք լուսաւորչական եկեղեցու դարեւոր անխա-տելի աւանդութիւններին և հիմնովին քանդում ենք նրա զոյւղութիւնը:

Իսկ այժմ երբ նոյն մարդկանց ան ձ-ն ա կ ա ն շահը խախտվում է, նրանք նոր են սկսում նկատել, որ մեր եկեղեցու կազ-մակերպութեան ամենաեական հիմունքը խախտում է նոյն իսկ մեր հոգեւորականու-թիւնը և ը ն ա թ ո ղ կ ա կ ա ն եկեղեցուց դարձնել է նրան կենտրոնական եկեղեցի:

Մեր եկեղեցու աւանդութեամբ ժողովրդի, համայնքի, ծովի ամենաանբռնաբարելի իրաւունքն էր ընտրողական հաւանու-թեամբ ընտրել քահանայ: Բայց այժմ մեր քահանաների վերաբերմամբ ժողովրդի ազատ ընտրութեան սկզբունքը նոյն իսկ ձեւի համար էլ չէ կատարվում: Հոգեւոր բարձր իշխանութիւնը, թեմական առաջ-նորդը ծովի վրա այս կամ այն քահանայ, հովիւ նշանակելով էլ էլ հայցնում ժողո-վրդի կամքն ու համաձայնութիւնը և նը-շանակում է այս կամ այն ծովի վրա իր ուղած քահանային: Այն քահանան, որի համար ժողովուրդը վաղուց խնդրել է առել իր համար ծխանայ քահանայ և աւագ-քահանայ նշանակելու, դա չէ նշա-նակվում, իսկ նշանակվում է ժողովրդի կամ-քի դէմ նա, որի համար ոչ ոք չէ խնդրել և որին հաւանում է միմիայն հոգեւոր իշ-խանութիւնը:

Երբ մենք տասն և չորս տարվայ ընթաց-քում նոյն մտքերն էինք յայտնում—մեր լուսաւորչական դասակարգը, մեր ինտելիգեն-ցիան, մեր մամուլը խրայնող աղմուկներ էին գցում: Իսկ այժմ նոյն ինտելիգեն-ցիան, նոյն մամուլը, երբ այս կամ այն թերթի մէջ աշխատակիցները, նրա դեկա-վարները հարցի մէջ անձնական շահ ու-նեն,—այդ ժամանակ նոյն թերթը, որ «Մշակը» ամբողջ գոյութեան գործու-նեութիւնը դուրս նորիւրում ամեն կող-մից վնասակար էր համարում, նոյն թերթը, ասում ենք, նոր է յիշում Հայաստանից եկեղեցու անբռնաբարելի, դարեւոր հիմնա-կան աւանդութիւններն ու սկզբունքները և պահանջում է ժողովրդական իրաւունք, ընտրողական սկզբունք:

Մեր յայտնած սկզբունքները, որոնք ան-շահաւէր կերպով յայտնվելով ամեն կողմից համաձայն էին լուսաւորչական եկեղեցու հիմնական աւանդութիւնների հետ՝ պայտն-ները վնասակար էին համարում: մեր յայտ-

նած միտքը թէ «պէտք է վերադառնա՜նք սկզբնական, մաքուր, առաջին դարերի լու-սաւորչական եկեղեցու կազմակերպութեա-նը» յանդանը էին համարում—իսկ այժմ իրանք, երբ իրանց անձնական, նիւթական շահը անհակոխ է եղած, այժմ նոյն մարդիկ յանկարծ սկսում են խօսել ու գրել ս կ ղ ու լ ու ղ ն ե ռ ի անունով, իրանց դէմքին ծածկելով պ ը ի ն յ ի պ ն ե ռ ի զինակը, և-կեղեցու դարեւոր աւանդութիւնների հա-ւատարմի, անձնուէր պաշտպանների հանդի-սանալով:

Տարիների ընթացքում մեր յայտնած մտքերը վնասակար էին համարվում—իսկ այժմ իրանց յայտնած մտքերը, որոնք թոյլ կրկնութիւններ են այն մտքերի, որ մենք յայտնում էինք դեռ ևս 1872 թ-ին, «Մշակը» հրատարակման առաջին տա-րին՝ օգտաւէտ և եկեղեցու հիմնական սկզբունքների, ընտրողական պրինցիպի հետ համաձայն մտքեր են համարվում:

Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳԻՐ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՔԻՑ

Չամադան անբարեպաշտ հանդամանքների հետ միասին մեր թուրքալու թատրոնին քիչ չեն վնասում մի խումբ դ ե ռ ա ս ա ն համարող ան-ձինք, իրանց ազնու վարմունքներով: Մենք չենք խօսում այն սովորական երեւոյթի մասին, որ թէ Թիֆլիսում և թէ դաւաճեցողում՝ ամեն մի ցան-կացող դուրս է գալիս հայոց թատրոնի բնույթ, ա-ռանց ընդունալութիւն, հնորս և պատրաստու-թիւն ունենալու. մենք չենք խօսում այն ծիծա-ղելի երեւոյթի մասին, որ Համէթի, Օտե-լայի, Գիւղեմանայի և Օֆիլիայի, և այլ այդպիսի դերերում բնույթ դուրս գալիս այնպիսի դերա-սաններ և դերասանուհիներ, որոնք հալիւ կարող են կատարել հայոց որ և է ողբերգութեան մէջ մի նախարարի դերը, կամ մի որ և է սովորական պիւսայի ու փողովի մէջ աղախնու, կամ այդ աղախնու սիրահարի դերը: Աւելորդ ենք համա-րում նոյնպէս և խօսել այն սովորութեան մասին, որ գործ են դնում զանազան ինքնավրէ դերա-սաններ, ամեն անգամ ներկայացում կայացնե-լիս, երբ խանութից խանութ, անից տուն ընկած՝ ամեն անգամ ստոր միջոցներ գործ դնելով, ամու-սակ են ուղում վաճառել և այլն և այլն: Մենք ուղում ենք միմիայն մի փոքր ուշադրութիւն դարձ-նել այդ դ ե ռ ա ս ա ն անուանութիւն, թատ-րոնի դադախարի մասին հոգացողների այդպիսի վարմունքների վրա, որոնց ամենապարզապարի լու-րւոյ կարելի է խաբարելութիւն անուշը տալ, և որի դէմ բողոքում են թէ Թիֆլիսում, և թէ դա-ւաճեցողում:

Հատարակութիւնը կարգում է վառաւոր ավի-շաների վրա, որ այս ինչ օրը, այս ինչ թատրո-նում, այս և այն անձանց մասնակցութեամբ, մեղիկալով և ուրիշ պատրաստութիւններով կը խաղաղվին այս ինչ պիւսաները: Հատարակու-թիւնը կարգում է այդ ավիշանները և կ ա-մ ա յ, կ ա մ ա կ ա մ ա յ՝ դնում է թատրոն: Հատարակութիւնը, աստարադարար, սխալվում է իր սպասելիքների մեծ մասի մէջ, նա սխալվում է ոչ թէ մի անգամ, այլ համարեա յաջորդապա-ր: Եւ հետեանք այն է լինում, որ ամեն անգամ պատահական դերասանների կազմած ներկայա-ցումը դնալիս, իւրաքանչիւր որ, կարծէր ընտրող-ման, նախադուշաւում է, որ այդ օրը ներկայա-ցումը չի կայանալ: Եւ այդպէս կարծողը սովորա-բար չէ սխալվում: Ներկայացնողները մի ամ-բայն չեն համարում վերջին մի կտոր թուղթ և յայտարարել, որ ներկայացումը յետաձգվում է, այն էլ ան ո թ ո շ ժամանակով: Այդ յետաձգում-ների պատճառները լինում են մեծ մասամբ ոչ թէ այն, որ մուտք բաղարկին չէ լինում, որ տոմ-սակներ քիչ են լինում վաճառված, այլ այն, որ

թատրոնին նուիրված խաղացողները հաշվում և տեսնում են, որ ծախքը մուտքից դուրս գալով, շատ քիչ բան է մնում տակը, և այդ պատճառով յոյս ունենալով մի քանի օրից յետոյ աւելի շահ ունենալու, վճարում են յետաձգել ներկայացումը... Իսկ հասարակութեան զայրւթիւնը, բողոքը, տրտու-նը,—այդ ոչինչ, այդ երկրորդական է...

Գարձենք պատկերի միւս կողմը: Վերջապէս յետաձգող ներկայացումը կայացաւ, հասարակու-թիւնը խմբված է թատրոնի դահլիճի մէջ և սպա-սում է: Երկար է սպասում և շատ ձանձրանալով: Աֆիշի մէջ յիշված մեղիկան չը կայ: Անտարակ-տեւոր տեսնում են կէս ժամը, և թատրոն եկողնե-րը ստիպված են կամ դժգոհութեան ցոյցեր ա-նել, կամ մեղադրել իրանց, որ թատրոն եկանու-թեան վարչապետը, հասարակութիւնը տես-նում է, որ մի պիւսայի փոխարէն մի ուրիշ են խաղում, երբեք պիւսայի տեղ մէկն են խաղում: Հանդիսականը վերցնում է ձեռքը ավիշան և նը-կատում է, որ շատերը ավիշայի մէջ նշանակված-ներից չեն մասնակցում, որ ավիշայի մէջ նշա-նակված երգչուհին չէ երգում, կարգադրող չէ կարգում, և այլն, և այլն և այլն. էլ չենք խօ-սում այն արդէն չափազանցութեան հասցրած սովորութեան վրա, որ բնույթ դուրս եկողները դե-րեւը չեն սովորում, բնույթ սարքը անտանելի է, կարգադրող չը կայ, ներդաշնակութիւն ու դեղ-արուեստի նշան չը կայ...

Տարաբաղդաբար, այդ խաբարելութիւնները այն-քան յաճախ կրկնվում են, որ հասարակութեան հաւատը բոլորովին խախտվում է, եւսանող սառ-չում է, և ամեն անգամ այդպիսի ուշադրական կամ ոչ-դրամատիկական տպուկի խմբերի ներկա-յացումների մասին ավիշա կարգադրող ամենքն էլ ժպտալով սկսում պատմել, որ «ո՛վ դիտէ ինչ խայտառակութիւն է»:

Պէտք է խոստովանվել, որ այդպէս շարունակե-լով ոչ թէ միայն օգուտ չէ կարելի տալ թատրո-նի դարձին, այլ և այնպէս կարելի է կտրել նրա անունը և նշանակութիւնը, որ շատ ցաւալի դը-րութեան կը հանդի թատրոնի դարձը մեր մէջ: Բայց այդ բոլորի մէջ ամենավատը այն է, որ այդպիսի աղեղ վարմունքների հեղինակները, յանդիսութիւն ունեն իրանց թատրոնի բարեկամ և աշխատաւոր կարծելու յամանակ է վերջ տա-լու այդպիսի բողոքականութիւններին, որոնք միջնադարեան անտանելի են հասարակական ընա-ւորութիւն ունեցող ձեռնարկութիւնների մէջ...

Թատրոնատէր

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հայոց մշտական խումբի ներկայացումները դա-դարեւոյ շատ երկար ժամանակ անցնելուց յե-տոյ, այս օրերս ավիշանները մեղ աւտոցին, որ նախկին Արծրունու թատրոնում հայ դերասանա-կան խումբը կը ներկայացնէ «Փայլակ» անունով ինքնուրոյն դրաման, որի հեղինակը համառու-թեամբ ծածկված է Յ. Պ. Թատրոնի տակ: Որով-հետեւ մեր մէջ ինքնուրոյն թատրոնական զոված-ներ շատ ուշ ուշ են երևում, ուստի, պէտք է խոստովանենք, որ տրախուլիստի դիմելի-րաց զատարկ լինելը նոր բան չէ հայոց թատրո-նի համար, այլ առակ լուարուք... Երկար սպասելի, աշուղներին լուրերի, վերջապէս ժամի 9¼ վարա-դրող բարձրացում: Բնույթ ներկայացում է մի և-րիսաւոր ստորհանաւոր Բարեկ Շիշակեանի կինը, որ շատ աշխատել է, դարձարաններ է սիրում, բայց Բարեկը չի կարող յաղթել կնոջ՝ բոլոր ցանկութիւնները իր հարկը լուրջ ուժի-կով, որոնցից 60 ռուբլին նա պէտք է իր պարա-քերին տալ: Վատնական դրու է դնում իր բոլոր իրերը և վերջապէս տեսնում է մարդու ժամացո-յը և տանում է դրու գնելու: Իր հօր նախկին բարեկամ հարուստ վաճառական Վարդիս Զուլիա-կեանի մօտ, որ այդ փողկալ հազուամեն-քին

ինչ որ պարահանդէս դնուաւ Վարդիսը սիրահար-ված է Վարդիկայի վրա և սկսում է նրան խեղճի-հանել, որ նրան իրան հրամայ ընդունի, նա էլ Բարեկին իր կանտորացում մեծ ուժիկով տեղ կը տալ և Վարդիկային լաւ կը պահի: Վարդիկան համաձայնվում է և այդ ժամանակից սկսում է ամենախաբարձ կեանքը վարել: Բարեկը ոչինչ չի նկատում, վերջապէս մի անգամ նա պատահ-մամբ տեսնում է Վարդիկին Վառնիկային համ-բուրելիս. վաղում է, իր սննդակից բերում Սար-գսի առեւտրական գրեկը և բոլորը պատահում, դրանից յետոյ բերում է ատրճանակ, ի հարկէ այն մտքով, որ կամ Վարդիկ կամ Վարդիկային սպա-նի: Ամբողջ ժամ նա բարձրացնում է ատրճանակը, դուռն է՝ «սպասուս կուրա, վնչ երեխա», բայց ինչու չէ արձակում. երկի այն պատճառով որ այդ բոլորին յանկարծակի նա թողալիս է ստա-նում. նրան տանում են հիւանդանոց, բժիշկը բոլոր ժամանակ նրան ձկան իւղ է խմացնում, բայց երե-ւում է որ այդ չէ օգնում և նա մեռնում է երեխա-յին յանձնելով բժիշկին: Բժիշկը Բարեկի երեխային, Զարեկին, տանում է իր մօտ, տալիս է զիւ-նադիւս, որ աւարտելուց յետոյ պէտք է դնու-համալտարան: Գնալուց առաջ մայրը ուղում է նրան տեսնել, բոլոր դործող անձինքը (ի հարկէ առանց ուժ տարի առաջ մեռած Բարեկին) հա-ւաքվում են անտառ, խօսում են, միայն ոչինչ չէ հասկացվում: Կուլիսների ետեւից լսվում է «Дай молнию», կայծակը տալիս է, ամպը դուռն է, դործող անձինքը դնում են, դալիս են, վերջա-պէս ամենքը դնում են, բնույթ վրա մնում է միայն Վարդիկան, նա էլ չգրում է բնույթ մէջ տեղ, վա-րադրան ընկնում է և դրաման վերջանում է: Ինչ-պէս տեսնում էք պիւսայի համար վատ իղէս չէ ընտրված, բայց պիւսան զոված է անխորձ կերպով, դրականական կողմից շատ թոյլ է, և բոլորովին չեն պահանջված բնական ամենատարրական պայմանները:

Աւելացրէք պիւսայի բոլոր այդ անաշուղու-թիւններին խաղացողների անտանելի խաղը, բե-մի վատ սարքը և այն ժամանակ կարելի է միայն դադարի կարգիւ այդ ներկայացման ինչ լինելու մասին:

Nemo

ՌՈՒՍԱՅ ԹԱՏՐՈՆ

Կիրակի օր ռուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց Լաֆլ Օմէլէ «Համադարձարանա-տէր» (Le maitre des Forges) դրաման: Այս դը-րաման անաղին յաջողութիւն է ունեցել Փարի-զում, և առաջին ներկայացման նայած, կարելի է դուշակել, որ նոյն աշուղութիւնը կունենայ և այստեղի բնույթ վրա: Մարիկուհի դը Բուլի աղ-ջիկ կարան սիրահարված է և զեղծ է նշանված է իր աղգականներից մէկի՝ դուքս դը-Բուլի հետ: Դրուի դրամական գործողը վատ են գնում և իր-կալային հետ ամուսնանալով նա, ի միջի այլոց, կամենում է կարայի բաժնեդր՝ այդ գործիւրը կարգի բերել: Յանկարծ նա խնամում է, որ մար-կիկուհին տանու է տուել մի դատաստանական գործ, որով կորցնում է զեղծի իր ամբողջ հարու-տութիւնը. այդ պատճառով դուքսը հրամարվում է խօսքից և առաջարկութիւն է անում չափազայի հարուստ գործարանատէր Մուլկին աղջկան: Հայր և աղջիկ մեծ հակում ունեն դէպի արքայազնու-թիւն, այդ պատճառով արքայազնու ընդու-նում են դրուի առաջարկութիւնը: Մտաւայ հան-քերի տէր Կերլը սիրահարված է կարայի վը-րա, բայց չէ համարձակվում յայտնել այդ նրա բարեկամներից մէկը յանձն է առնում այդ բա-նը: Կարան, որ խուլված և յուսահատված դը-րութեան մէջ է դրուի արքայազնուց, բոլորական ներգործութեան տակ համաձայնութիւն է տալիս Կերլին կինը լինելու: Հարանկիւր յետոյ երբ Կերլը կամենում է օգտվել իր ամուսնական իրաւունքներից՝ կնոջից լսում է՝ որ նա իրան չէ սիրում և արհամարհելով է պատկիւ նրա հետ, և այժմ խնդրում է որ նա իրան ազատ թողնի:

Վրացական Գերբի, որ միանգամայն չէր սպասում այսպիսի բացատրութիւն, խաբարելով իր յորհրդի մէջ, արձամբարձանքին պատասխանում է արհամարհանքով, յայտնում է որ թող չի տայ իր հետ այսպէս խաղալու, և թէ նա կաշխատի վրէժ-ինդիլը լինել և երբեք չի ներքի կարգաւոր այդ վարմունքը: Այդպիսով հարսանիքի առաջին օրից մարդ և կին բաժանուիմ են, ապրում են առանձին, թէ և մի յարկի տակ: Այդպիսի կենցաղավարութիւն տեսած է վեց ամիս: Գերբի այդ ժամանակամիջոցում աւելի սերտ է կապում իր գործին և բանտընդին և իր բոլոր այժերը և խնցրը գործ է գնում թէ առաջինը աւելի կատարելագործելու, թէ երկրորդները կեանքը բարելաւացնելու: Կարան աւելի մօտ ճանաչելով իր ամուսնուն սկսում է սիրել իր անհայտ, բայց հպարտութիւնից չէ կամուսնու խոստովանել այդ բանի մէջ: Գործը, որ իր կնոջ հետ հիւր է Գերբիի մօտ, նկատելով ամուսնիների մէջ եղած յարաբերութիւնները, կամուսնու է օգտակարանք, կարծելով որ Կարան դու ևս նրան սիրում է, բայց Կարանի կողմից մի այնպիսի ընդդիմադրութիւն է ստանում, որ ստիպւում է յետ քաշվել: Մի և նոյն ժամանակ Կարան սկսում է նախանձել դրսուհուն, որ ուղղում է իր վրա սիրահարանի Կերբիին: Կարան՝ դրսուհուն հետ առանձնապէս տաք վիճաբանութիւն ունենալուց յետոյ՝ առաջարկում է նրան անմիջապէս թողնել իր տունը. դրսուհին չէ յօժարւում. այն ժամանակ Կարան մի և նոյնը պահանջում է իր տան մէջ ժողոված հասարակութեան առջև: Ընդհանուր շփոթութիւն: Գործը հարցնում է Կերբիին՝ թէ արդեօք ընդունում է իր վրա կնոջ արարածները հետևանքները, և ի՞նչ է այդ, այն ժամանակ ի դիմաց իր կնոջ՝ նա պէտք է ներողութիւն խնդրի: Գերբի ներողութիւն խնդրել չէ կամում և նրանք վճռում են մենամարտել: Գերբի վերջին արարածները վերջնականապէս կ ու ա թ ու մ է Կարանին, և նա այլ ևս չը կարողանալով դիմանալ զոհում է ամուսնուն, ընկնում է նրա ոտները, յայտնում է որ նա նրան սիրում է, ներումն է խնդրում իր անմիտ վարմունքի համար, չէ կամում որ նա մենամարտի: Գերբի անողորմ է և հաւատարիմ իր խօսքին ու երդման, թողնում է կնոջը և գնում մենամարտելու: Կարան վճռում է ինչ որ լինի խանդարել մենամարտութիւնը: Մենամարտութիւնը կատարւում է անտառում. զենքը ատրճանակներ են և զրկած են ամենախիստ պայմաններ: Հէնց որ նշան է արելւում ատրճանակներ արձակելու, վրա հասած Կերբան ընկնում է հարձակուողների մէջ տեղ և Գերբիին նշանակած դնտակը սպանում է նրան: Գրանայի բովանդակութիւնը առնված է Դորթ Մեյի համանուն վէպից: Առհասարակ այդպիսի փոխադրութիւններ մեծ մասամբ անաշուղդ են լինում, քանի որ վերջում են վէպի մի քանի կտորները ու պատկերները, փոխառւում նրանց և կապում միմեանց հետ բնականութիւնները որ պարզ ու որոշ են վէպի մէջ, յանկարծ դառնում են մութ, անորոշ և անհասկանալի, որովհետև նրանց պարզապէսով կէտերը բերվում են կցկտուր կերպով: Մի և նոյն պակասութիւնը մասամբ նկատվում է և «Maitre des Forges»-ի մէջ, բայց ոչ շատ աչքի ընկնող կերպով: Գրա փոխարէն գործողութեան առաջանալու և դարձադրման ընդհանուր ելքը, վարպետութեամբ գծադրած տեսարանների դասաւորութիւնը, հերոսուհու դրամատիկական լի գրութիւնը, այդ բոլորը ստիպում են հանդիտականին չնչստպառհասաբարբութեամբ հետևել իր առաջ կատարվող հոգեկան փոփոխութիւնը լի, ինչպէս անուանում է ինքը հեղինակը, պիէսային S. Մայերովա լա էր Կարայի դերում. այս դերասանուհին բաւական ջգային տարր է մտցնում իր դերակատարութեան մէջ, և այդ պատճառով առաջին անգամից մի փոքր ոչ գուրկան ներդրածութիւն է անում, բայց չուտով անցնում է: Գրա հակառակն է ա. Կորնակովա (կատարում էր դրսուհու դերը), որ միշտ ճանդարտ և սառն է խաղում: Պ. Յորկատի Կերբիի դերում իր տեղը չէր. պարտքը անկատարելաբար գեղեցիկ կոմիկ է. դրամատիկական դերերը նրա ոչ միայն բարձր են. Պ. Մակարով իրան աբիտակտու ձեռնդրող Մուլենին շատ սրու է տիպիական գոյն իր տուել: Միև մասնակցողներից ոչ ոք անսամբը չէր վաշտում: Այս պիւսան բնութիւն վրա դնելը շատ բարդութիւններ է ներկայացնում, և պէտքը խոստովանած բխորը սեւերեն չը դուրս եկաւ:

Nemo

ՆԱՄՄԱԿ ԱՍՏՐԱԽՈՒՆԻՑ

Ապրիլի 9-ին

Աստրախանցի հայադէն երջանկայիշատակ Նիկողայոս Աղաբաբեան իր սեփական գումարով, 1810 թ. Աստրախանում հիմնել է իր անուանով մի ուսումնարան, որը մի ժամանակ ծաղկած դրութեան մէջ է եղել և մեծ օգուտ է տուել Աստրախանի հայ հասարակութեան: Աստրախանցիք ինքն այսօր փոքր ի շատէ՝ դիտեն խօսել հայերէն, ինքն նրանցում կան այսօր գործողներ, թէ և անհայտ թւով, այդ պարտական են բարերար Աղաբաբեանին: Հանդուցեալ Ն. Աղաբաբեան հիմնելով այդ ուսումնարանը հայ չքաւոր երեխաների համար, նրան ապահովելով է, յստեղացնելով՝ արդիւնաւոր մի քարոզանալայ, որը գնաւում է քաղաքի ամենալաւ մասում: Իր կենդանութեան ժամանակ ուսումնարանի կառավարիչն էր, և եղել և իբրեւ հիմնադիր, ոչինչ չէ խնայել ուսումնարանը լաւ և ապահով դրութեան մէջ պահել, հրաւիրելով ժամանակակից լաւ ուսուցիչներ, որոնցից մեք այստեղ յիշում ենք՝ Սերովբէ Պատկանեանին: Բայց վախճանելով ուսումնարանի հիմնադիրը՝ Ն. Աղաբաբեան, ուսուցիչներն էլ հետզհետէ սկսում է ընկնել և այսօր նա գտնվում է օղորմելի դրութեան մէջ: Քարոզանալայն էլ, այդ միակ նիւթանալայ ապահովացնող ուսումնարանին, երկար տարիների ընթացքում ոչ մի անգամ չը վերանորոգելով, քաղաքամաս դրութեան հասու և վերջերում համարեն ոչ մի արդիւնք չէր տալիս: Ուսումնարանը զրկվելով նիւթական միջոցից, ինչ կապած, որ նա երկար գոյութիւն ունենալ չէր կարող և յիշուի, նրան վախճելու վտանգ էր սպառնում: Այսպէս վախճել է իր թաւը և ևս ուսումնարանը պէտք է վախճել և ինքն էլ թաւը պէտք է աւերվել: Եւ ահա այդ վտանգը, իր մեծ հարուստով զգալով տեղական հայ հասարակութեան տանտէրը՝ պ. Բաճարով Մեկընցեան, 1881 թ. դեկտեմբերի 8-ին, հասարակական ժողով է կազմում և մի զեկուցումով նրանց ուշադրութիւն է հրաւիրում այդ տխուր երեւոյթի վրա՝ նկարագրելու ուսումնարանի և քարոզանալայի անմիջապէս վիճակը, և խնդրում է դիմել միջոցների ուսումնարանը վտանգից ազատելու: Պ. Մեկընցեան իր զեկուցման մէջ յիշում է և հետեւեալը. Աղաբաբեանի մահից յետոյ ուսումնարանը իր ծաղկեալ դրութիւնից սկսում է ընկնել: Աւելի մեծ հարւած է լինում ուսումնարանին, երբ նա այրւում է:

Այդ ժամանակ պատուաւոր քաղաքացի Գրիգոր Սարգսեան իր սեփական տունը տալիս է 18 տարեկան ժամանակակից ուսուցիչներին աշակերտներին՝ մինչև նորի կառուցանելը: Մի քանի ժամանակից յետոյ, Գրիգոր Կաղաչեան հրաւիրում է իր տանը մի քանի պատուաւոր անձանց, խորհելու ուսումնարանի մասին: Այստեղ նա հանգանակութիւն է բացում, ուր ժողովում է մօտ 6,000 ռ., իսկ պ. Վարդան՝ Պատական ընծայում է մի տուն՝ մօտ 3—4,000 ռ. արժողութեամբ, ուր այժմ տեղաւորված է ուսումնարանը: Իսկ այդ տունը վերանորոգելու և յարմարեցնելու համար, պ. Կաղաչեան իր սեփական գումարից միկում է մօտ 15,000 ռ.: Նոյն ժողովում ընտրում են 5 անձինք, որոնց միջոցով հասարակութիւնը դիմում է Կաղաչեան ուսումնարանական շրջանի հողաբարձուն և խնդրում միջոցներ լուսաւորութեան նախարարին՝ ուսումնարանի անտեսական մասը յանձնել հասարակութեան և իրաւունք ստանալ քարոզանալայ վերանորոգելու: Լուսաւորութեան նախարարութիւնը ջնջելով այդ խնդիրը, առաջարկում է Կաղաչեան ի հաստատութիւն: Կաղաչեան հասան գտնելով հաստատում է և հրամայում ի գործադրութիւն: Աստրախանի հայ հասարակութիւնը ստանալով իրաւունք, ընտրում է իրանից 5 հողաբարձու: Ընտրվում են՝ Յ. Սարգսեան, Բ. Մեկընցեան, Մ. Լիլիկեան, Մ. Բորչալեան և Մկրտչեան և առաջարկում են կառավարութեան հաստատել այդ անձնաւորութեանց իրանց պաշտօնում, և 1886 թ. փետրվար ամսում հողաբարձուները հաստատվում են: Հէնց նոյն երկուշաբթի պ. Մեկընցեանի առաջարկութեամբ հանգանակութիւն է բացվում և գումարվում է 6,715 ռ.: Այդ ժողովում ի միջի այլոց վճռում են՝ յանուն Աղաբաբեանի պահել 2 որդեկը՝ 1 զինադիր, իսկ միւսը՝ քաղաքական դպրանոցում և մի որդեկը՝ տեղական օր. դիմադիր, կատարել հոգեհանդիստ՝ Նիկողայոս Հրաչադորի տոնին եկեղեցում, իսկ

մեկուց օրը զերեմանի վրա և իւրաքանչիւր տարի տալ 30 ռ. յօգուտ որոյց և այլեւայ հոգեւորականաց:

Քարոզանալայ վերանորոգելու համար ջնջելով և վերանորոգման ծախսը կրուտաւ համարելով, հողաբարձութիւնը աւելի յարմար համարեց քան զի և բոլորովին նորը կառուցանել: Բայց այս դիտուածում մեծամեծ արգելքներ պէտք է հանդիպեն, որովհետև պատաստի գումար չուներ: Բացի այս, ուսումնարանը առ ժամանակ զրկվում է բոլորովին միակ նիւթական աղբիւրից և նրանք պարտաւոր են հողաւ ուսումնարանի ծախսը ջրային նրանք յոյս դնելով հասարակութեան վրա, արդէն սկսել են քանդել և մայիսի 1-ին հանդիսով նորի հիմքը կը դնեն, որի մասին մենք ձեռք կը գրենք, ինչ յաջողվեց մեզ ներկայ լինել: Այդ նպատակով հանգանակութիւն է բացվել և հանգանակվել է 14,000 ռ., վերադնալ 6,715 ռ. հետ, իսկ ուսումնարանն ունի սեփական գումար 6,000 ռ.: Ընդամենն է՝ 20,000 ռ.: Հանգանակութիւնը շարունակվում է: Տունը կառուցանելու համար կը ծախվի մօտ 50,000 ռ. այդքան գումար սրտելից պէտք է հաւաքեն: Թող աստրախանցիք գտնէ այս անգամ աշխատեն գործով ցոյց տալ, որ հասարակութիւնը ստանալու թիւում չէ վերաբերվում աղբային գործերին, որ նա աջակցում է անհասներին և ոչ թէ միայն անհասներին են գործում, ինչպէս մենք գրել ենք և պնդում ենք: Մենք չենք ուղարկ ասել, որ աղբատը իր հայրից կտրի և տայ աղբային հիմնարկութեանց. ոչ Մենք այս ատու ենք ունենալ դատաւարից, հարուստներին, և ինչպէս ասեցինք, թող նա ցոյց տայ, որ մենք սխալվել ենք: Հողաբարձութիւնը դիմել է դատաւան անձնաւորութեանց և օգնութիւն է խնդրել. ի միջի այլոց և մօակվանակ պ. Ս. Ջանուսեանին և յոյս ունեն, որ նա երբեք չի բացաւի համաբաղաւորների խնդիրը և իօրին այս քարեհանակում և աղբային գործին: Նոյն յոյսը ունեն և պ. Ա. Պատականեանի վրա, որ հետեւելով իր հօրը, նիւթապէս կաշակցէ այս աղբային գործին: Չը մոռանանք յիշել, որ Աղաբաբեան ուսումնարանի աշակերտներից ամենք, ի նշան երախտակութեան, իրանց մէջ սկսել են այդ նպատակով փող ժողովել: Թէ և այդ նրանց բարոյական պայքարն է, բայց այնու ամենայն պատիւ նրանց:

Վերջապելով մեր յօդուածը, հրաւիրում ենք Աստրախանի հայ հասարակութեան լուրջ ուշադրութիւնը և յոյս ենք տածում, որ նա կաշակցէ իր ընտրած հողաբարձուներին այդ ծանր, բայց վստիկ գործի յաջողութեամբ պայմելու և Աղաբաբեանի ուսումնարանը այժման անկեալ դրութիւնից բարձրացնելու:

Յոնան Գալիկեանց

ՆԱՄՄԱԿ ԱՍՏՐԱԽՈՒՆԻՑ

Ապրիլի 16-ին

Բարոյականութիւնը զարգանում է մարդու մէջ աստիճանաբար իր ստացած կրթութիւնից: Նրա դատարարականին են նոյն իսկ իր չընթացաւոր տարրը, զարոյցը և եկեղեցին: Նրանք են ներդրում մարդու մէջ բարի և առաքելի ձեռք տուելու. նրանք են թիկադրում մեզ մարդասիրական կապով պարտք և իրաւունք ճանաչելու, միով բանիւ, նրանք են նպաստում մեր դարձաւոր մանր մասաւորապէս և հոգեպէս: Եթէ մեզ չընթացաւոր մարդը և ամբողջ, որոնց մէջ ենք ապրում, անընդունակ է իր աշխատութեամբ մեզ լաւ վարձապետ լինելու, ինչէ հայրը իր կենդանի օրինակով հեռու է բարոյական մարդ լինելուց, որդու ձակաւորադիր՝ առանց զարոյցի և եկեղեցու բարեւոր աղբեղութեան, անտարակոյս պիտի ենթարկվի հօր տխուր հետեւեցին. այս զէպքում, երբ բոլորը և մեծ վարձապետները—դարոյցը և եկեղեցին իբրեւ հարաւոր ծնողներ, իրանց ոյժերով պիտի կրեն ուսերին ամբողջ մարդկութեան բարոյական վերակենդանութեան ծանր լուծը: Դրոյցը, մարդկութեան մանուկ սերնդի բանական անդաւաճումով պիտի սերմանէ բարի և առաքելի սերմեր, իսկ եկեղեցին պիտի անկնէ՝ այդ սերմերը և պտուղները առաւարակ: Երբեք մարդը մարդութեան է երկիրը՝ մացառներից և անպիտան բոյսերից, պարտաւորանում է այդ երկիրը արուեստական կերպով, հերկում է, սերմանում է, ուտուում է, իսկ բնութիւնը՝ երկնային ցօղը և արեւը իրանց ներդրութեամբ բուսցնում, աճեցնում և զորացնում է այդ սերմերը. և ահա երկրագործի

քրտնքի արդիւնքը պատրաստ է մարդկութիւնը վաշտելու: Արդեօք զարոյցները և եկեղեցին նոյնաշան կատարում են իրանց նուիրական պարտքը, արդեօք ունեն այն բարոյական ներդրութիւն, մարդու վրա. արդեօք արդարացնում են նրանք մի անկախութիւնները՝ կրկնալու ուսանողական նախաբանից բարձրացած համարել, դարձուլ կրկնալու անձնաօթ պատանի կարող է վարել հմուտ սերմնացանի պաշտօնը. ի բնէ սառն և անտարբեր, անուս և ծոյլ եկեղեցականը ստանձնելով կրկնային ցօղի և արեւի դերը կատարելու, կարող է ունենալ իր ներդրութիւնը դեռ չը մարդկած և սրբված անդաւաճում վրա: Վարապը զէպի վեր է քաշում, ինչպիսիւսը ետ ետ, իսկ ձուկը զէպի դեռ, ահա նոյն դրութեան մէջ ենք գտնվում և մենք, մեր զարոյցները և մեր եկեղեցին:

Եթէ ժողովուրդը եկեղեցին չէ յաճախում, այդ դեռ ևս չէ նշանակում, որ հանգած է մեղանում կրօնական վերամեանդութիւնը. նրան, զէպի եկեղեցի դրաւելու համար, (եթէ նա չէ հետեւում ինստիտյուտին) կան և մագնիսացնող միջոցներ, որոնք են—ներգաշնակ և կանոնաւոր երգեցողութիւնը և բնական խրատները: Ո՛ր են Արմիի այն մանկները, որ Շտորձալու հոգեւորացի երգը գրաւչ ներգաշնակութեամբ թափանցում էին ունիւրիւնների սրտի և մտքի մէջ.—չը կան, որովհետև զարոյցը չէ մատակարարում երգեցիկ խոսք: Ո՛ր են այն հմուտ և ճարտասան քարոզիչները, որ մեծ Վարդապետի շնորհաց անուպաւելի աղբիւրի կենդանաբար կաթիլները ծուրեցնում էին մեր ծարաւի սրտերի անդաւաճանի վրա, որ կրկնային սուրը գրգռել բարոյական և իմաստալի խրատներով, նրանց անկախութեամբ և իրանց կենդանի բարոյական օրինակներով խոնարհեցնում էին ժողովուրդին զէպի ճշարիտ առաւարակաւորութիւն և առաքելութիւն. (եթէ, փակագծի մէջ ասելով, չը յիշենք Ճերմակեան հայր սուրբի մի քանի աստուածաբանական խորատները, մենք տարինելով զրկված պիտի լինենք եկեղեցու բնոյց կենդանի խօսքի բուրոյց, բայց անուս, որ հայր սուրբի խրատները ևս նոյն աղբեղութիւնը չեն կարող ունենալ, ինչ որ ինքը և մենք ակնկալում ենք. որովհետև նրա մարդը և բաւերը անմատչելի են նոյն իսկ մեր ինստիտյուտ դատակարարին և զարոյցների ուսուցիչներին, հայր սուրբը ժողովրդական քարոզիչ չէ): Եկեղեցին թուանում է իր աղբեղութիւնից և այն պատճառով, որ այժման կաթմակարպութեան մեր ուսումնարանները անհամապատասխան են նրան օժանդակելու. զարոյցները պատրաստելու են և եկեղեցու արժանաւոր միաբանութիւն, հօտ և հովիւ:

Ախարիսայում արհեստը ինքն մասամբ չեղելու է իր նախապետական սկզբունքից, այդ պարտական ենք արտաքին աղբեղութեանը: Երբ առեւտրականութիւնը մի ժամանակ բաւարար էր համարվում մեղանում, երբ տաճկական սահմանը կից էր մեր քաղաքին, երբ արտասահմանի հետ մեր առեւտրական յարաբերութիւնները, փոխանակելու և փոխադրելու զանազան աղբաւորներ հեշտ էին միջոցները և նպաստաւոր, այն ժամանակ շատ քիչ էին մտածում արհեստի կատարելագործութեան մասին: Իսկ այժմ երբ վաճառականութիւնը կոյցրեց իր ոյժը, երբ առեւտրի աղբիւրները ցամաքեցան սահմանի հեռանալով, մասնաւոր երբ նոր նոր պահանջներ աւելանալով հեռաւոր երկրներից բերված զանազան իրեղէնները մըրցում էին մեր տեղական արհեստի արդիւնքները: Իսկ մեր տեղական արհեստի արդիւնքները ևս, ահա այժմ այդ հանգամանքները առկա տուեցին աւելի լրջօրէն մտածելու, ձեռնարկել նորիմոյց փորձերով արհեստի կատարելագործութեան: Քաղաքի արհեստաւորները այժմ անհամոտ աւելի աշողակ վիճակի մէջ են քան առեւտրականները. (թէպէտ և ոչ մի քաղաքի նախանձը չարժեւու չափ առեւտրութիւն չունեն նիւթականապէս): Մի քանի արհեստների արդիւնքը մասամբ արտահանվում է և Կովկասի զանազան երկրների, երկաթագործի պայտը, մեղքը և այլ գործիքներ, կոշիկալարի բաշտաքը, մէլու և փապուշը, արծաթագործի ձեւագործ գորգերը, միտաքաղաքի թիւը և երկրը արտահանվում են Թիֆլիս, Գալաթի, Ալեքսանդրոպոլ, Ախալքալաք, Արզրահան, Օլթի և այլ տեղեր: Ունենք այստեղ և մի քանի գործարաններ, որոնք քաղաքի բաւականութեամբ տալուց յետոյ իրանց արտադրութիւնը ուղարկում են նոյնպէս հեռաւոր և մերձաւոր քաղաքներ. երբեք սապօնի գործարան, մի գործըրի, երկու արուեստական հանքային ջը-

—Սերբիայի թագաւոր Միլանի և թագուհի Նա-
տալիայի մասին զանազան լուրեր են զայլու. եր-
կու ամուսինների մէջ տարաձայնութիւն է ծագել
ոչ-միայն քաղաքական պատճառներով, այլ և ըն-
տան և կ'ան հանգամանքների չնորոշ: Յայտնի
է, որ Նատալիա թագուհին մեծ հակում ունի
դէպի Ռուսաստանը, իսկ Միլանը կատարի աւ-
ստրոֆիլ է: Միլան թագաւորը վերջին ժամանակ-
ներում արդիւնք Նատալիա թագուհուն խառնովել
քաղաքական գործերուն Այդ գծովսովեանը ա-
ւելացել է և մի ընտան և կ'ան պատճառ-
այդ աչն է, որ Միլան թագաւորը շատ էլ չէ կա-
րող պարծենալ դէպի իր կինը ունեցած հաւա-
տարմութեամբ:

—Փարիզից գրում են, որ Գերուէյը հրաժարւել
«Հայրենասէրների միութեան» նախագահի պաշ-
տօնից, ոչ թէ ընտանիական պատճառներով, այլ
այն պատճառով, որ ֆրանսիական կառավարու-
թիւնը շատ խաղաղասիրական քաղաքականութեան
է հետևում, և յարմար թուէր զգուշացնել ու
զուտ քաղել իր հաշիւները Գերմանիայի հետ վեր-
ջացնելու համար:

—Մեքսից գրում են ֆրանսիական լրագրողներին,
որ ապրիլի 22-ին իշխան-Օթարինայից ուստի-
կանութեան կարգադրութեամբ դուրս ուղարկվե-
ցան շատ ֆրանսիացիներ:

—Բերլինից գրում են, որ Շենքելի գործը վեր-
ջացնելու համար Հռոմի պապը առաջարկել էր
իր պատրաստականութիւնը միջնորդի դեր կա-
տարելու:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՈՒՍԱԳՐՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 20 ապրիլ: Ելլաւ-Օթարին-
այից պատերազմական դրութիւնը չէ մոցն-
վում:

Աթէնք, 20 ապրիլ: Կանդա կղզու վրա շա-
րունակում են քրիստոնեաների և մահմեդական-
ների մէջ ընդհարումներ: Երկու կողմից էլ կան
վերադարձներ և սպանութիւններ:

ՍՕՖԻԱ, 20 ապրիլ: Շուտով սպաւում է աղ-
ջային մեծ ժողովի գումարումն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 ապրիլ: «Petersburger Zei-
tung» լրագրը հաղորդում է, որ Պետերբուրգում
այս րօպէի տեղի ունեցող բանակցութիւնները
առաջնական ստանան հարցի մասին հաղիւ թէ
համաձայնութեամբ վերջանան, որովհետեւ երկու
կողմերն էլ սնդում են իրանց պաշտօնների վրա:
Զորեքայրի օրը կայանալու է մի նշանաւոր
նիստ, որտեղ հետեւալ հարցը պէտք է վճարի
շարունակել թէ կորել սկսած բանակցութիւննե-
րը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 21-ին			
Ռուսաց 1 րօպլ	Լօնդոնի վրա արժէ	213/4	պէնս.
—	Համբուրգի վրա	180	պֆ.
—	Փարիզի վրա	223 1/2	սան.
Ռ. կի.	արժէ	9	32 կ.
Մարքային կուպոններ	—	180	—
Արժաթ	—	1	37
Բօրսային դիվիդենդներ	—	4 1/2	6%
Պետական 5% տոմս	1-ին շրջանի	99	50
—	2-րդ	99	25
—	3-րդ	99	—
—	4-րդ	99	12
—	5-րդ	99	—
—	6-րդ	—	—
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	50	—
—	2-րդ	99	62
—	3-րդ	99	87
Ներքին 5% տուաջին փոխառութ.	260	50	—
—	երկրորդ	240	—
5 1/2% ընտա.	—	102	75
Ռուսաց ընտա.	—	196	75
Նօթերորդ կոնսոլիդաց. փոխառու- թիւն.	—	167	50
Նոր երկաթուղային ընտա.	—	98	87
5% գրաւական թղթեր կալուած.	—	—	—
—	փոխ. կրեդ. ընկ.	165	75
—	Գրաւ. թղ. Ալիւ. բանկի.	98	75
5 1/2% գրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի.	—	97	75
6% գրաւակ. թղ. Նարկովի կալ. բան.	—	102	25
—	—	101	75
—	—	102	—
—	—	101	75
—	—	103	—
—	—	101	25
—	—	101	50
—	—	101	25
—	—	27 և 43 տ.	—
—	—	18 և 43 տ.	—
Վ. օլմակ-Կամիկի բանկի ակցիաները	662	—	—
Ռուսաց երկաթուղային զինաւ. ընկ.	272	—	—
Բերլինակ-Վոլգովի ընկ.	—	101	50
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլի- զացիաներ.	—	95	50
Մօսկովայի քաղաք. օրլիզացիաներ.	—	96	—
Օդէսայի —	—	93	50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ.	—	—	—
Պետական բանկի 6-դ հրատարա- կութեան տոմսերը	—	—	—
Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ֆօնդերի վերաբերմամբ շատ ամուր է:	—	—	—

ՊԵՏԱՍԻԱՆՆԵՐ

ՂԱՐԱՍՈՒՐԱՋԱՐ. Յ. Բ. Ուլարեկեյնը ձեր պա-
հանքած «Эконом. пол. тучен. арм.» բրօշուրը,
և գերմաներէն լեզուով թարգմանված Գրիգոր Արծ-
րունու երկու բրօշուրները. նմանապէս «Հայ-
կական նշանագիր» բրօշուրը:

ՄԱՐՍԵԼ, Կ. և Ռ. Զոր ուղարկած 10 րօպլի
ստացանք պ. Կ. խաղէսէրեանից:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԲՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն Ն Ե Ր

Մայրապետ Կատարինէ իշխանագնահէ ԵՐԿԱՅՆԱԲԱՋՈՒԿ-ԱՐԳՈՒԹԵԱՆՅ և
Պաշէ Բարեղեան իշխան ԱՐԳՈՒԹԵԱՆՅ, յուզք արտի յայտնում են իրանց քոյր ԲԱ-
ԼԻ ԱՐԳՈՒԹԵԱՆՅԻ մահը Սանահունի և խնդրում են աղքատներին և ծանօթներին
շնորհ բերել հանգուցեկոյ հոգեհանգստեան պաշտամանը և ա. պատարազին, որ
իշխելու է Կուսանայ եկեղեցում ամեցոյ 23-ին, հինգշաբթի, առաւօտեան ժամը
10-ին: 2—2

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антикарскими товарами
въ Тифлисе (Графская ул., домъ бывш. Набукова, во дворахъ).
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍՏԱՆ ԱՊՐԱՆԲՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ
ԹԻՖԼԻՍԻՄ (Գրաֆսկայա փողոց, նախկին Շաբուրովի տանը, բակում)

ՆԵՐԿԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Ներկեր զանազան գոյնի, թէ չոր և թէ իւղով պատրաստած. նոյնպէս և հեղուկ ներկեր, որոնք
բոլորովին պատրաստ են գործածութեան համար:
ԵՄԱԼ կաշմող սպիտակ ներկ:
ԻՎԼ, կտաւաթի և կանէփի թէ հում և թէ եփած:
ԿՏԱԼ, ներկեր և սնանկներ նիւթիցների համար:
ՎՐՁԻՆԵՐ, խողանակներ, աւելներ, սպունգներ և գեղարվածութեան ուրիշ սխաղներ:

Hotel Nemecki Edmunda Dziecheńskiego, Warszawa, Ulica Długa, № 31.
(Нѣмецкая гостиница Эдмунда Дзехинскаго, въ Варшавѣ, Долгая улица, № 31).
Պ. Լգմանոյ Գեղեցիկագիւ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅՐ՝ վարչապետ, գումար է քաղաքի
կենտրոնում, գլխավոր կառավարչական ասանաների, թաղանթների և առևտրական կենտրոնական
տեղերի մօտ:

90 տնեակներ, 30 կողեկից մինչև 3 րօպլի օրական դնով: Բնաօրան և քաղաքից հեռերի
խառնութ: Հաշը 30 կողեկից մինչև 1 րօպլի: Կառքեր և գլխավորաների գէպի բոլոր երկաթուղիները:
Կառքերի վարձը շատ էժան:
Գլխադրան և օտար լրագրիներ՝ ձրիաղէս հիւրերի համար: ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅՐ, որ
յաճախված է քաղաքից հեռերում Թիֆլիսից և նրա շրջակայանից, ստանում է այդ հիւրերի հա-
մար հաջոյ ՄՇԱԿԻ լրագրից:

(Հ)

ԳՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորեքայրի, ապրիլի 29-ին, ՄԵՐՈՐ (MEURTHE) շողեւում, նաւապետ
ՍԵՐԵՆՈՆ (SERENON) դուրս կը դնայ Բաթունից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պօլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է զիմել ընկերութեան
գործակալներին. Բաթունում պ. Գարանիօնի և Թիֆլիսում պ. Բէնօնի, նախկին Արծ-
րունի զաւլերում, № 103.

4—4



ՀԻՆԳԵՍԲԻՒ, 23 ապրիլի, ՆԻԿԻՏԻՆԻ ՅԻՐԱՌԻՄ
պարսկական պաշտոնական արտիստ

ԲՈՒԲԻՐՏ ԼԵՆՑ

Պատիւ կուենայ տալ ձեռնածութեան երրորդ
ներկայացում, երկը հետաքրքիր, և զուարճակ
բաժանմունքների բոլորովին նոր պրօգրամայով:
Ուրիշ բազմաթիւ փորձերի թւում այս երկից
հասարակութեան ընդհանուր ցանկութեամբ կը
ներկայացվի

ԵՐԿՐՈՐԳ ԱՆԳԱՄ

ԱՇԽԱՐՀԻՍ ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՇԻ
կամ

ՏՈԿՈՋ ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ԱՆՀԵՏԱՆԱԼ ԲԱՑ ԲԷՄԻՅ

Սկիզբը 8 ժամին երեկոյեան:
Վաղօրք տոմսակները կարելի է ստանալ Գօշովիսկի պրօսպեկտի վրա, Նաղէի
շաշմայեղների ֆարիկայում, Մուխրանսկու տանը: Մանրամասնութիւնները աֆիշանե-
րում: 1—1

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱԼԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՐՕՎԻԶՈՐ ԱՏԱՄՆԱԿԵՂ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻ ԷԼԻԿԱՄԻ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍԸ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան զեղափաճաւտան, և պ. պ.
Շահարանեանցի, Մակկէրի, Սէնչիօվսկու և Ազմուրդի զեղաաներում: ԲԱԳՈՒԹԻ մէջ՝
Բէկկէրի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍԻՄ՝ Կօլօշեվի մօտ, ԱՏԱՎՐՈՊՈԼԻՄ Բրօնսօցիու մօտ և ԵԿԱ-
ՏԵՐԻՆՈՎԱՐՈՒՄ:
(Հ.)

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԵՂԲԱՐՅ ԺԱՄՀԱՐԵԱՆՅ

Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ

Այն պարտներին, որոնք ցանկանում են ԱՊԱՀՈՎԵԼ առաջին և երկրորդ փոխա-
ռութեան 80ՄԱԿՆԵՐԸ մեր բանկում, խնդրում ենք ուղարկել ամեն հատի համար 60
կօպէկ, և 10 կօպ. անդորրագրի համար առանձին: 6—10

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Պապիրոսի ԹՂԹԻ տեղաւորների և ԳԻԼՋԱՆԵՐԻ, պահեստ ամեն տեսակ թղթի և
կարտոնի

Ս. Մ. ԱՆՆՆՈՎԻ

Մեծ ընտրութիւն պապիրոսի թղթի տեղաւորների և զեղաների իսկական սիմիդ-
րի թղթից, ֆարիզի և Վիեննայի յայտնի գործարանների:
Կեղծունեներին առաջն տունելու համար պապիրոսի թղթի տեղաւորների իւրաքան-
չիւր թերթիքը կրում է ֆիրմայի անունը ՌՈՒՍԱՅ և ՀԱՅՈՑ լեզուով:
Պրէսիտրանտները անկարձ են ուղարկվում առաջին պահանջման համեմատ:
Հապէն, Բօստով (Գօնի վրա) Ս. Մ. Աննոֆին. Ростова (на Дону) С. М. Ана-
пову. 7—10

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՋՈՒՈՎ

ՁԻՆԻՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Վերնագրով վերջից: Գրքիցը պարունակում է իր մէջ. ա) ընդհանուր
գիւնարադրական կանոնադրութեան համառօտութիւնը, և բ) կովկասեան զինա-
րադրութեան վերաբերեալ 1886 թւի մայիսի 28-ի Բարձրագոյն հաստատած
պէտ ա կ'ան խօրհրդի կարծիքը ամրողապէս:

ՆՈՐ ԳԻՐԲ. (ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵՋՈՒՈՎ)

ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՌԻՆԵՐ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահայի 1
լրջան: Կինը 35 է: Թիֆլիսի գրափաճաւտանցներում: 10 աւելի առնողներին 20%
շեղում կը լինի Կենտրոնական գրափաճաւտանցում:

28—30